«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0037, Ազատության պ 1/21-1
Հեռ.՝ +374 60 701 707, +374 77 010 863
info@ayb.am
www.ayb.am

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

*Մասնակից՝ Գոհար Աստինյան*

*«Այբ» դպրոց*

*Մենտոր՝ Լիլիթ Պետրոսյան*

ԵՐԵՎԱՆ, 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…………………………………………………………………………………………………… 3

Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված մեթոդների կիրառում տարրական դասարաններում……………………………………………………………………………………………5

Եզրակացություն…………………………………………………………………………………………11

Գրականության ցանկ……………………………………………………………………………………13

Հավելված…………………………………………………………………………………………………14

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգլերենը միջազգային հաղորդակցության լեզու է, և ժամանակակից աշխարհում անգլերենի կիրառման շրջանակը լայնորեն ընդլայնվում է: Այս փաստը հաշվի առնելով՝ մեծ նշանակություն է տրվում անգլերենի իմացության խորացմանը, ինչպես նաև դասավանդման մեթոդներին:

Լեզվի յուրացումը գործընթաց է, որով սովորողները ձեռք են բերում լեզուն ըմբռնելու և յուրացնելու ունակություն (Pichler, 2015): Իսկ լեզուն ըմբռնելու և յուրացնելու համար բանավոր խոսքի զարգացմանն ուղղված դասեր կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ուսումնառության գործընթացը լինի հետաքրքիր, ինչն էլ սովորողների շրջանում կառաջացնի ակտիվություն և օտար լեզու սովորելու մեծ ցանկություն:

Ըստ Բրաունի՝ օտար լեզու սովորելու գործընթացում հաջողությունը հաճախ չափվում է այն հանգամանքով, թե ինչպես է սովորողը կարողանում միտքը փոխանցել օտար լեզվով: Հաղորդակցումը սահմանվում է որպես իմաստ պարունակող ակտիվ գործընթաց, որը ներառում է տեղեկատվության բանավոր փոխանցում, ստացում և մշակում (Brown, H. D., 2000):

«Հաղորդակցումը լեզվին սահուն տիրապետելու հմտությունն է, որը ենթադրում է ոչ միայն լեզվական հատկանիշների իմացություն, այլև տեղեկատվությունը և լեզուն տեղում մշակելու ունակություն և հմտություն» (Harmer, J., 2007, p. 285):

«Բազմաթիվ աղբյուրների առկայության շնորհիվ ներկայումս անգլերեն սովորելու գործընթացը դարձել է անհամեմատ ավելի հեշտ: Ընդունված է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը և մանկավարժական մեթոդների զարգացումը հնարավորություն են տալիս ստեղծել լավ մշակված, աշակերտակենտրոն, ինտերակտիվ և արդյունավետ ուսուցման էլեկտրոնային միջավայրեր» (Khan, B. H., 2005, p. 8):

Օտար լեզու դասավանդելիս կարևոր է միաժամանակ զարգացնել լեզվական չորս հմտությունները (խոսել, լսել, կարդալ, գրել), սակայն հաճախ հնարավոր չէ ապահովել նշված բոլոր հմտությունների հավասար զարգացումը: Տարրական դասարաններում օտար լեզու դասավանդելիս, անշուշտ, շեշտը հավասարապես դրվում է լեզվական բոլոր հմտությունների զարգացման վրա,

սակայն սովորողները հաճախ բախվում են լեզվի խոսքային կառույցների դժվարություններին, որի արդյունքում անհրաժեշտ ժամկետում չեն կարողանում զարգացնել հաղորդակցման հմտությունները: Այս խնդրի համատարածված լինելու բնույթը և արդիականությունը հաշվի առնելով ու կարևորելով՝ բանավոր խոսքի զարգացումը տարրական դասարաններում դարձավ իմ հետազոտության առարկան: Հետազոտական թեմայի ընտրությունս օգնում է լիարժեք հասկանալ դասարանում առկա խնդիրները և ստանալ հստակ պատկեր:

**Հետազոտության նպատակն է՝**

1. Ուսումնասիրել տարրական դպրոցի սովորողների բանավոր խոսքի զարգացման հնարավոր եղանակները և փուլերը:

Հետազոտության նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. Վեր հանել բանավոր խոսքի զարգացմանն ուղղված մեթոդները,
2. Պարզել, թե որ առաջադրանքներն են առավելապես նպաստում սովորողների բանավոր խոսքի զարգացմանը,
3. Պարզել, թե որքան ժամանակ է անհրաժեշտ առաջ քաշված խնդրի լուծման համար,
4. Կատարելով ուսումնասիրություններ սովորողների շրջանում՝ կազմել հետազոտության տվյալները:

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից աշխարհում անգլերենը ունի լայն տարածում և կիրառում, և այս պարագայում համապատասխան գիտելիք ունենալը ընդլայնում է միտքը, ապահովում է զարգացման նոր հորիզոններ և բացում է լայն հնարավորություններ կյանքի տարբեր ոլորտներում: Այս ամենը հաշվի առնելով՝ անգլերենի զարգացած բանավոր խոսք ձևավորելը դեռևս տարրական դասարաններից հիմք է ծառայում՝ հետագայում սահուն և անկաշկանդ հաղորդակցության համար:

**Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված մեթոդների կիրառում տարրական դասարաններում**

Տարրական դասարաններում օտար լեզու ուսումնասիրելիս սովորողները զարգացնում են լեզվական չորս հմտություններ (խոսել, լսել, կարդալ, գրել): Հետևելով տարիների փորձին և օտար լեզվի այլ մասնագետների պնդումներին՝ կարելի է փաստել, որ սովորողների լսելու և կարդալու հմտությունները համեմատաբար արագ են զարգանում: Եվ նույնիսկ, ունենալով զարգացած լսելու և կարդալու հմտություններ, սովորողները, լեզվական խոչընդոտների հանդիպելու պատճառով, բախվում են օտար լեզվով միտքն արտահայտելու դժվարությունների: Փորձելով ուսումնասիրել և գտնել խնդրի պատճառները, ինչպես նաև առաջարկել նոր լուծումներ՝ հետազոտությունը իրականացնելու համար ընտրել եմ երրորդ դասարանի մի խումբ, որտեղ 15 սովորողների մեջ ընգրկված են թե՛ արագ յուրացնող, թե՛ հավելյալ օժանդակություն պահանջող աշակերտներ: Երկրորդ դասարանի վերջում նշված խմբի սովորողների մեծ մասը արդեն իսկ սկսել էր ձեռք բերել բանավոր խոսքի որոշակի հմտություններ, սակայն ոչ բոլորն էին դեռևս կարողանում արտահայտել միտքը անգլերեն: Ստորև գծապատկերի տեսքով ներկայացնում եմ սովորողների բանավոր խոսքի հմտությունների հետազոտության սկզբնական փուլում (գծապատկեր 1): Սովորողների խոսելու հմտությունը գնահատելիս հաշվի են առնվում խոսքի սահունությունը, բառապաշարը, քերականական կառույցները, արտասանությունը և խոսքի կապակցվածությունը (տե՛ս Հավելված 6, Սյունակաշար 1): Գծապատկերի տեսքով ներկայացնելու համար ընտրել եմ «Բարձր», «Միջին» և «Ցածր» պայմանական անվանումները՝ պատկերը հստակ տեսնելու նպատակով:

*Գծապատկեր 1*




Առաջին հայացքից թվում է՝ քիչ են այն աշակերտները, որոնք դեռևս ունեն դժվարություններ, սակայն տոկոսային հարաբերակցությամբ արտահայտելիս գծապատկերը ցույց է տալիս, որ դասարանի շուրջ 20%-ի մոտ ունենք առկա խնդիր, ինչը թույլ տվեց մտածել, որ պետք է կառուցել էլ ավելի խորը և նպատակաուղղված աշխատանք (գծապատկեր 2):

*Գծապատկեր 2*




Հետազոտությունը իրականացնելու համար իմ տրամադրության տակ ունեի 20 դասաժամ, որը թվում է՝ կարճ, սակայն բավարար ժամանակամիջոց է՝ փոփոխված (թե՛ դրական, թե՛ բացասական) պատկեր ստանալու համար: Սովորողների բանավոր խոսքի զարգացմանը նպաստելու նպատակով կիրառել եմ տարբեր մեթոդներ, որոնց ընտրությունը պայմանավորված էր թե՛ միջազգային փորձից վերցված, թե՛ անձնական նախաձեռնությամբ կազմված առաջադրանքներով: Առաջադրանքի վրա հիմնված ուսուցման առանցքը այն գործընթացն է, որի ժամանակ սովորողներն աստիճանաբար սկսում են յուրացնել լեզուն՝ կատարելով տարբեր առաջադրանքներ (Willis et al, 2007):

Առաջադրանքի վրա հիմնված ուսուցման ձևերը բազմազան են, և ճիշտ ընտրված առաջադրանքները, անշուշտ, նպաստում են սովորողների տարբեր հմտությունների զարգացմանը:

Համակարգված աշխատանք ներկայացնելու նպատակով իմ տրամադրության տակ ունեցած 20 դասաժամը բաշխել եմ 4 խմբի և յուրաքանչյուրի համար սահմանել եմ հստակ պահանջներ: Աշխատանքի առաջին փուլում «Storyfun 3» դասագրքից ընտրվել է պատմվածք՝ որպես բանավոր խոսքի զարգացման միջոց: Ընտրված ցանկացած տեքստի ծավալից և բովանդակությունից ելնելով՝ առաջադրանքները կարող են կիրառվել թե՛ մեկ, թե՛ մի քանի դասաժամի ընթացքում:

Ստորև ներկայացնում եմ այն առաջադրանքները, որոնք կիրառվել են նյութը լիարժեք յուրացնելու և այն վերարտադրելու նպատակով:

*Առաջադրանք 1*

Նախքան ընթերցանության և պատմողական նյութերն ուսումնասիրելը՝ սկզբնական քայլը նոր բառերի ուսուցանումն է: Կիրառելով մտագրոհի մեթոդը՝ սովորողներն առաջին հերթին փորձում են վեր հանել նոր բառերի իմաստները: Վերլուծելով բառերի կիրառությունը համատեքստում՝ սովորողները փորձում են տալ մեկնաբանություններ և գտնել այն իմաստները, որոնք դրված են այդ բառերի հիմքում: Ուսուցչի օգնությամբ բառերը յուրացնելուց հետո սովորողները սկսում են կիրառել դրանք՝ կազմելով նախադասություններ: Այս ողջ գործընթացի ընթացքում պարտադիր է հետևել, որ սովորողները խոսեն միայն անգլերեն, որը դարձնելով սովորություն, աստիճանաբար կսկսեն զարգացնել բանավոր խոսքի հմտությունը:

*Առաջադրանք 2*

Բառերը յուրացնելուց հետո սովորողներին տրվում է ժամանակ՝ տեքստից մեկ հատված կարդալու համար: Կարդալուց հետո նրանք կիսվում են իրենց մտքերով և արտահայտում են այն ամենը, ինչ հասկացան տեքստից: Այս առաջադրանքը օգնում է, որ սովորողները սկսեն ավելի լայնորեն կիրառել լեզուն՝ օգտագործելով բառեր սեփական բառապաշարից: Դժվարանալու դեպքում, անշուշտ, ստանում են աջակցություն, որպեսզի արդյունքում ստանանք կապակցված և իմաստալից խոսք: Քննարկումը ավարտելուց հետո ևս մեկ անգամ բոլորով կարդում ենք տեքստը՝ այն լիարժեք հասկանալու համար:

*Առաջադրանք 3*

Հաջորդ առաջադրանքը կատարելու համար սովորողները բաժանվում են զույգերի: Զույգերը կարող են կազմվել կամ առցանց գործիքների օգնությամբ, կամ ուսուցչի ընտրությամբ: Յուրաքանչյուր զույգ ստանում է նախապես գրված մեկից երկու հարց, որոնց պատասխանը պետք է ինքնուրույն ձևակերպել և գրել՝ օգտագործելով նոր սովորած բառերը: Այս առաջադրանքը կատարելու համար զույգերն ընտրվեցին առցանց գործիքի միջոցով:

Նշված բոլոր առաջադրանքները կիրառվել են մեկ պատմվածքի շրջանակում բանավոր խոսքը բարելավելու նպատակով: Այս քայլերը նպաստեցին նրան, որ սովորողները ավելի հստակ պատկերացում ունենան՝ ինչպես կարելի է սկսել խոսել իրենց ծանոթ նյութի մասին օտար լեզվով: Քայլերի նշված հաջորդականությունը առավել արդյունավետ էր այն սովորողների համար, որոնք նախապես յուրացրին նորածանոթ բառերը հետագայում դրանք կիրառելու նպատակով:

Նշված առաջադրանքներից զատ, որպես տնային աշխատանք, սովորողներին նաև հանձնարարվում է վերապատմել նյութը, որի շնորհիվ նրանք լիովին ամբողջացնում են ձեռք բերած գիտելիքները (տե՛ս Հավելված 1, Դասապլան 1, 26.09.2022):

Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված հաջորդ քայլերը կատարվել են այլ նյութերի ուսումնասիրման շրջանակում: Առաջին քառորդի ընթացքում երրորդ դասարանում սովորողները յուրացրել են երեք թեմա դասագրքից: Առաջին թեման յուրացնելու համար նրանք պետք է նախապես սովորեին դասասենյակում գտնվող առարկաների անունները (օրինակ՝ board, desk, window, door, chair, clock, cupboard և այլն), իսկ քերականությունից՝ There is / There are կառույցները: Նշված բառապաշարը և քերականությունը կիրառելու նպատակով ցուցադրվեցին 2 տարբեր դասասենյակների նկարներ, և նրանց առաջադրանքն էր համեմատել երկու դասասենյակները՝ օգտագործելով թե՛ նոր բառապաշարը, թե՛ քերականությունը:

Այս առաջադրանքը արդյունավետ կիրառելու և ձևավորող գնահատում կատարելու նպատակով կիրառվեց Think, Pair, Share մեթոդը, որի ընթացքում սովորողները կազմեցին զույգեր և նրանց տրվեց ժամանակ նախ մտածելու, ապա մտքերը ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր զույգ քննարկեց իր տարբերակը, սովորողները կիսվեցին իրենց մտքերով, որից հետո յուրաքանչյուր զույգին տրվեց ժամանակ, որպեսզի կարողանան ներկայացնել

իրենց մտքերը ամբողջ դասարանի առջև: Այս առաջադրանքի շնորհիվ հնարավոր դարձավ կատարել նաև ձևավորող գնահատում, որից հետո սովորողներին տրամադրվեց հետադարձ կապ իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ (տե՛ս Հավելված 2, Դասապլան 2, 15.09.2022):

Երկրորդ թեման, որը յուրացրել ենք այս քառորդի ընթացքում վերաբերում է մեր առօրյային: Այս թեմայի բառապաշարը (օրինակ՝ get up, get dressed, have lunch, go to school, have dinner, play in the park և այլն) օգնում է աշակերտներին պատմել իրենց ողջ օրվա ընթացքում կատարած գործողությունների մասին: Բառապաշարին զուգահեռ սովորեցինք նաև ժամերը: Նշված նյութը յուրացնելու և կիրառելու նպատակով կիրառեցի երկխոսություններ կազմելու մեթոդը: Նախօրոք կազմեցինք զույգերը, իսկ զույգերի ընտրությունը այս անգամ կատարվեց իմ կողմից՝ ըստ սովորողների լեզվական իմացության և հմտությունների: Այս առաջադրանքի պահանջն էր նոր սովորած բառերով կազմել հարցեր դասընկերոջ համար, իսկ դասընկերոջից պահանջվում էր պատասխաներ հարցերին՝ օգտագործելով նոր բառերը և իհարկե գործողության կատարման ժամանակը:

Օրինակ՝ - When do you **get up**? -When do you **go to school**?

- I **get up** *at 9 o'clock.* – I **go to school** *at 12 o'clock.*

Ուսուցչի ընտրությամբ հարցը կազմում էին լեզուն առավել լավ տիրապետող աշակերտները, իսկ պատասխանները տալիս էին ուսումնական որոշակի օժանդակության կարիք ունեցողները: Այս միջոցը թույլ է տալիս աշակերտներին իրենց զգալ հարմարավետության գոտում և չխուսափել խոսքը բանավոր կերպով արտահայտելուց: Սակայն հարմարավետության գոտում գտնվելը չի ենթադրում զարգացման հնարավորության սահմանափակում: Անշուշտ, թե՛ բառապաշարը, թե՛ քերականությունը նրանց համար նոր են, և դրանք կիրառումը խոսքում արդեն իսկ սովորողներին մղում է մեկ քայլ առաջ:

Երկխոսությունները կազմելուց հետո թեման ևս մեկ անգամ ամրապնդեցինք խաղի միջոցով: Խաղերի համար հիմնականում կիրառում եմ առցանց գործիքներ և այս անգամ օգտվեցի www.baamboozle.com կայքից, որը առաջարկում է բազմապիսի ուսուցողական խաղեր՝ սովորած նյութը ամրապնդելու համար: Նշված կայքի խաղերը առավել մոտիվացնում են սովորողներին, և բոլորը միանշանակ ներգրավվում են գործընթացի մեջ: Սովորողները բաժանվեցին երկու խմբի՝ աղջիկների և տղաների, և դասի վերջին տասը րոպեն

ամբողջությամբ յուրացրին անհրաժեշտ նյութը (տե՛ս Հավելված 3, Դասապլան 3, 04.10.2022):

Խաղի հղումը՝ https://www.baamboozle.com/game/484324

Այս քառորդի վերջին թեմայի նյութը կենդանիներն էին: Այստեղ խնդիրը մի փոքր մարտահրավերային էր, քանի որ թեմայի բառապաշարին սովորողները հիմնականում արդեն ծանոթ էին, և անհրաժեշտություն առաջացավ մտածել ու նոր առաջադրանքեր՝ բանավոր խոսքի զարգացմանը նպաստելու համար: Այս նպատակով որոշեցի իրականացնել փոքրիկ նախագիծ, որի շրջանակում երրորդ դասարանցիները պետք է նախօրոք սովորեին բնական միջավայրերի անունները (polar habitat, ocean, grassland, rainforest), որից հետո դասակարգեին կենդանիներին ըստ բնական միջավայրի (տե՛ս Հավելված 4, Նկար 1): Դասակարգումը կատարելուց հետո աշակերտները պետք է նախապատմեին աշխատանքային ամբողջ ընթացքի մասին, ապա խոսեին բնական միջավայրերի և դրանցում ապրող կենդանիների մասին և իհարկե հիմնավորեին՝ ինչ սկզբունքով են կատարել դասակարգումը: Այս առաջադրանքը կատարելիս աշակերտները իրենց խոսքում կիրառեցին բոլոր նոր սովորած բառերը, օգտագործեցին զանազան ածականներ և ամբողջովին ամրապնդեցին նյութը:

Այսպիսով, կատարելով չորս բաժնից բաղկացած նյութերի նպատակաուղղված ուսուցում և քառորդի ավարտին կրկին կատարելով անդրադարձ սովորողների բանավոր խոսքի հմտություններին և կրկին հաշվի առնելով խոսքի սահունությունը, բառապաշարը, քերականական կառույցները, արտասանությունը և խոսքի կապակցվածությունը՝ ստանում ենք հետևյալ պատկերը՝

*Գծապատկեր 3*



Իսկ տոկոսային հարաբերակցությամբ արտահայտելիս ստանում ենք այսպիսի պատկեր՝

*Գծապատկեր 4*




Ստացված տվյալները փաստում են այն, որ այն մեթոդները, որոնք կիրառվել են դրված նպատակին հասնելու համար եղել են արդյունավետ և համապատասխան նշված տարիքային խմբի սովորողների համար:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով տարրական դպրոցի սովորողների բանավոր խոսքի զարգացման հնարավոր եղանակները 20 դասաժամի սահմանում, ինչպես նաև կատարելով նպատակաուղղված ուսուցում և արդյունքների ամփոփում՝ կարելի է եզրակացնել, որ նշված ժամանակահատվածը բավարար եղավ սովորողների բանավոր խոսքի զարգացումը ապահովելու համար: Հետազոտության արդյունքները ներկայացնող գծապատկերից պարզ է դառնում, որ ցածր արդյունքներ ցուցաբերող սովորողների թիվը 20 դասաժամի ընթացքում նվազել է 7%-ով, իսկ բարձր արդյունքներ ցուցաբերող սովորողների թիվը աճել է 21%-ով:

Հետազոտությունն իրականացնելիս հետաքրքրիր էր պարզել նաև՝ արդյոք խնդիրը պահանջում է երկարաժամկե՞տ, թե՞ կարճաժամկետ լուծումներ: Ավարտին հասցնելով երրորդ դասարանում իրականացված հետազոտությունը՝ կարելի է փաստել, որ, կառուցելով նպատակաուղղված ուսուցում և կիրառելով համապատասխան մեթոդներ, հնարավոր է զարգացնել սովորողների բանավոր խոսքի հմտությունը անգամ սեղմ ժամկետներում: Բոլոր մեթոդները, որոնք նշված են հետազոտական աշխատանքում կիրառելի են նաև տարրական դպրոցի երկրորդ և չորրորդ դասարաններում:

Հետաքրքրական էր նաև պարզել, թե որ մեթոդներն էին առավել արդյունավետ կերպով նպաստում բանավոր խոսքի զարգացմանը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ պատմողական նյութերի ճիշտ ընտրությունը և դրանց շուրջ կառուցված աշխատանքները զգալիորեն օգնում են հասնել պահանջվող վերջնարդյունքին: Իհարկե, երկխոսություններ կազմելու մեթոդով սովորողները նույնպես զարգացնում են լեզվական հմտություններ, սակայն երրորդ դասարանցիների շրջանում կատարած ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ տարրական դասարաններում այս մեթոդը չի կարող մեծապես նպաստել օտար լեզվի զարգացմանը՝ սովորողների սահմանափակ բառապաշարունենալու պատճառով:

Թեմայի արդիականությունից ելնելով՝ այս թեմայի շուրջ հետազոտություններ իրականացվել են բազմաթիվ անգամներ: Ուսումնասիրելով այլ հետազոտողների արդյունքները՝ կարելի է փաստել, որ դրված նպատակին հասնելու համար կարող են իրականացվել բազմազան մեթոդներ: Կան հետազոտողներ, որոնք հիմնվում են միայն մեկ մեթոդի վրա և փորձում են նպատակին հասնել՝ կիրառելով միայն այդ մեթոդը: Տարրական դասարաններում բանավոր խոսքի զարգացման միջոցներ են ընթերցանությունը, մուլտֆիլմերը, առակները, պատմվածքները, երկխոսությունները, դերախաղերը և այլն: Սակայն իմ ուսումնասիրության շրջանակում ես չհիմնվեցի միայն մեկ ուղղության վրա՝ ծրագրի առանձնահատկությունից, բովանդակությունից և բազմազանությունից ելնելով: Հետազոտությունն իրականցնելիս համեմատական եզրեր գտա մեքսիկ ուսուցիչ Վերոնիկա Մենդեզ Հիմենեսի կատարած աշխատանքի հետ, որտեղ նա ուսումնասիրում էր բանավոր խոսքի զարգացումը՝ պատմողական նյութերի միջոցով: Նա նույնպես փաստում է, որ տարրական դասարաններում խոսքը զարգացնելու լավագույն տարբերակներից մեկը լեզուն կիրառելն է՝ նախապես յուրացրած լինելով համապատասխան բառապաշար: Նա նույնպես

հետազոտությունն իրականացրել էր փոքր խմբում, որտեղ ունեցել է արդյունքների բարելավում: Ես նույնպես իմ հետազոտության փուլերից մեկում կիրառել եմ այդ մեթոդը, որը համարում եմ բանավոր խոսքի զարգացման արդյունավետ միջոց: Համեմատական անցկացրել եմ նաև սլովակ ուսուցիչ Կլաուդիա Պուլիկովայի աշխատանքի հետ, որտեղ նա փաստում է երկխոսությունների և դերախաղերի դրական ազդեցությունը բանավոր խոսքի զարգացման վրա: Իմ կատարած ուսումնասիրության արդյունքում երկխոսությունների մեթոդով ես լիարժեք չհասա ակնկալվող արդյունքին, քանի որ ունենալով սահմանափակ բառապաշար և քերականություն՝ այդ առաջադրանքը կաղապարում էր սովորողների միտքը, և նրանք դժվարանում էին ապահովել ակնկալվող ծավալի չափով բանավոր խոսք դասի ընթացքում:

Մեթոդների և առաջադրանքների բազմազանության մեջ, այնուամենայնիվ, կարևոր է կատարել ճիշտ ընտրություն՝ վերջնարդյունքին հասնելու համար: Թերևս, մեթոդների ճիշտ ընտրությունը պայմանավորված է ուսուցչի փորձառությամբ և սովորողների՝ լեզվի իմացության մակարդակի ճիշտ գնահատմամբ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Brown, H. D. (*2000*). Principles of Language Learning and Teaching (4th ed.). White Plains, NY: Pearson Education.

Harmer, J. (*2007*). The Practice of English Language Teaching. Harlow: Longman.

Khan, B. H. (*2005*). Managing E-learning: Design, Delivery, Implementation and Evaluation, Hershey, PA: Information Science Publishing.

Pichler Chen (*2015*). 'Language Learning through the Eye and Ear Webcast'. Laurent Clerc National Deaf Education Center: Gallaudet University.

Willis, D., & Willis, J. (*2007*). Doing Task-Based Teaching. Oxford: Oxford University Press.

Jimenez, V. M*. (2017).* Semantic Scholar, 2017.

Paulikova, K. (*2018*). Research Gate, 2018.

## ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1, Դասապլան 1

## Դասապլան

Ուսուցիչ՝ **Gohar Antinyan**

| *Առարկա՝ English* | | **Ամսաթիվ՝ 26.09.2022** | | **Կիսամյակ՝ I** | | **Դասարան՝ 3** | | **Դասաժամ՝ 8** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Խմբի կազմը՝** | Աղջիկ՝ 8 Տղա՝ 7<br>ՈՒՅԿ՝ | | | | | | | | |
| **Թեմա՝** | ***Story: Jack and the penguins*** | | | | | | | | |
| **Օգտագործվող նյութեր՝** | *Projector, Video, Audio, PowerPoint Presentation*<br>*Online resources:* [www.wordwall.net](http://www.wordwall.net) | | | | | | | | |
| **Ամբողջական պատկեր՝** | *The students have already learned the Present Simple Tense and are able to use basic sentences in their speech. Before reading the story, the students will learn some new words.*<br>*The lesson will help them to develop their reading and speaking skills. They will be able to retell the story and use the new words in their speech.* | | | | | | | | |
| **Դասի նպատակը՝** | • *Pre-teach new vocabulary*<br>• *Enhance and develop speaking skills* | | | | | | | | |
| **Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ** | • *S3 To speak and understand grade appropriate topics*<br>• *S4 To participate in group discussions by asking and responding to questions by the teacher or group*<br>• *R1 To read and comprehend level-appropriate texts.*<br>• *GR 2 To use present simple questions and answers*<br>ՕԼ3-Հ-Ը.2<br>ՕԼ3 –Հ-ՈՒ-2<br>ՕԼ3-Հ-Ա.3<br>ՕԼ3-Հ-Փ.3 | | | | | | | | |

| | |
|---|---|
| **Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ** | *S 15*<br>*S 25* |
| | **Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** |
| **Վերջնարդյունքները՝** | 1. *Use the vocabulary in context, be able to produce a short oral speech*<br>2. *Apply level-appropriate sentence structures to be able to retell the story.* |
| **Խաչվող հասկացություններ** | Օրինաչափություն |
| **Բնագիտական և ճարտարագիտական պրակտիկաներ** | - |
| **Միջառարկայական կապեր** | *Մայրենի, Գիտություն* |
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները** | **Նպատակներին հասնելու ռազմավարությունը** |

| **Ի՞ նչ թիրախեք ընտրել Ձեր՝ որպես ու սու ցչ ի առաջընթացը փաստել ու համար:** | ***Սեղմ ներկայ ացնել , թե ինչ եք անել ու այ ս դաաին՝ այ դ նպատակներին հասնել ու համար:*** |
|---|---|
| Develop speaking skills among ESL elementary learners | *First, I am going to pre-teach some new words, then the students are going to apply the words in oral speech. The students will read the story for several times, in order to master sentence structures before retelling the story.* |

| Գործողո ւթյ ունն եր (ժամ/տևող ությ ուն) | Ու սու մնական գործու նեու թյ ու ն<br><br>*Աշակերտներ* | Դ ասավորած տարբերակու մ և ՈւՆԳ ռազմավարու թյ ուններ<br><br>*Ու սու ցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստու գու մներ<br><br>(համ ձնարարու թյ ան վերջնարդյ ունք ը նպաստու մ է դասի նպատակին)<br>Կապը չափորոշիչ այ ին վերջնարդյ ունք ների հետ |
|---|---|---|---|
| **5 min**<br><br>**10 min** | *To write the new words in vocabularies. To make sentences with them.*<br><br>*To read the story* | *To pre-teach the new words of the story*<br><br>*To help the students understand the meaning of the story* | 1. *Where does Jack's father work?* |

| | | | |
|---|---|---|---|
| **5 min** | *To watch a video* | *To play a video for the students to fully digest the meaning of the story* | 2. *What do penguins eat?*<br>3. *Where is the penguins' food?*<br>4. *What do they like eating?* |
| **5 min** | *Answer the questions in pairs* | *To hand out level-appropriate questions*<br>*To use group maker apps* | |
| **10 min** | *To play a game*<br>*(www.wordwall.com)* | *To play a game with students* | |
| **Աջակցություն** | | | |
| **Գնահատում** | *Formative assessment* | | |
| **Տնային աշխատանք** | *Retell the story* | | |
| **Անդրադարձ դասին** | The lesson went well. Thanks to different activities, my students were able to cover the material completely. They were able to learn the new words and use them in sentences. I think the lesson was a success because they were able to apply the knowledge in practice. I managed to complete all the activities that I had planned for the lesson. There were 2 students who still had to work on the material at home. | | |

| | |
|---|---|
| | However, I can say that everyone was interested in the lesson, and they all enjoyed the text. Thanks to the pair work I carried out a formative assessment. |

Յավելված 2, Դաս պլան 2

Դաս պլան

**Ուսուցիչ՝ Gohar Antinyan**

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Առարկա՝ English* | | **Ամսաթիվ՝ 15.09.2022** | | **Կիսամյակ՝ I** | | **Դասարան՝ 3** | | **Դասաժամ՝ 4** | | |
| **Խմբի կազմը՝** | Աղջիկ՝ 8 Տղա՝ 7 ՈՒՅԿ՝ | | | | | | | | | |
| **Թեմա՝** | ***My classroom*** | | | | | | | | | |
| **Օգտագործվող նյութեր՝** | *Projector, flashcards, pictures*<br>*Online resources:* [www.learningapps.com](http://www.learningapps.com) | | | | | | | | | |
| **Ամբողջական պատկեր՝** | *The students have already learned the new vocabulary and grammar. This lesson will help them to better remember and use the covered material.* | | | | | | | | | |
| **Դասի նպատակը՝** | • *To use There is/There are*<br>• *Enhance and develop speaking skills*<br>• *To consolidate the vocabulary and the grammar pattern of the unit.* | | | | | | | | | |

| | |
|---|---|
| Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ | S2 To ask and answer simple questions using the simple present<br><br>S3 To speak and understand grade appropriate topics<br><br>GR 1 To use *there is/there are*<br><br><br>ՕԼ 3-Դ-Ա.2<br><br>ՕԼ 3-Դ-Փ.3<br><br>ՕԼ 3-Դ-Փ.4 |
| Կապը հանրակրթության պետական չափորոշչի հետ | *S 10*<br><br>*S 25* |
| Վերջնարդյունքները՝ | **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** |
| | 3. *Use the vocabulary in context, be able to produce a short oral speech*<br>4. *Use There is/There are in sentences.*<br>5. *Apply level-appropriate sentence structures to be able to compare two things* |
| Խաչվող հասկացություններ | Օրինաչափություն |
| Բնագիտական և ճարտարագիտական պրակտիկաներ | - |

| | |
|---|---|
| **Միջառարկայական կապեր** | *Մաթեմատիկա* |
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները** | **Նպատակներին հասնել ու ռազմավարությունը** |
| **Ի՞նչ թիրախեք ընտրել Ձեր՝ որպես ուսուցչի առաջընթացը փաստել ու համար:**<br><br>Develop speaking skills among ESL elementary learners | ***Սեղմ ներկայացնել, թե ինչ եք անել ու այս դասին՝ այդ նպատակներին հասնել ու համար:***<br><br>*First, I am going to pre-teach some new words, then the students are going to apply the words in oral speech. The students will read the story for several times, in order to master sentence structures before retelling the story.* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈՒՆԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(համձնպարպության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)<br><br>Կապը չափորոշիչային վերջնարդյունքների հետ |
|---|---|---|---|
| **10 min**<br><br><br><br><br><br><br><br>**5 min**<br><br><br><br><br><br>**10 min** | *To review the vocabulary*<br><br><br><br><br><br><br><br>*To review There is/There are*<br><br><br><br><br><br>*To complete a worksheet* | *To say the definitions of the new words so that the students can guess the vocabulary. To use flashcards.*<br><br><br><br>*To play a game to review the grammar pattern (*[https://learningapps.org/13176401](https://learningapps.org/13176401)*)* | |

| | | | |
|---|---|---|---|
| **15 min** | *To compare two pictures using the new vocabulary and grammar* | *To hand out worksheets and monitor the class*<br><br>*To show 2 different pictures of classrooms and ask students to compare them using the new words* | *-Can you compare the pictures? What similarities and differences do you notice?* |
| **Աջակցություն** | | | |
| **Գնահատում** | *Several AFL strategies were used to carry out a formative assessment.*<br>- As a review of vocabulary, I handed out red and green cards to students and held some flashcards without showing any to the students. Then I told the kids that they were going to receive 3 hints, so they needed to listen carefully. For example: 1. You can write with it. 2. You can draw with it. 3. They can be colorful. What is it?<br>If the students guessed the meaning, they had to hold up their green cards. If they didn't guess the meaning, they had to hold up their red cards.<br>After getting their responses, I showed the flashcard, and the students said the word all together.<br><br>- To consolidate the grammar pattern *(There is/There are)* the students played an online game on www.learningapps.com. If the correct answer was *There is,* the girls were shouting the correct answer, if the answer was *There are*, it was up to boys to give the correct answer.<br><br>- The students completed a worksheet for covering the grammar structure. The results of their work helped me fully understand how well they had covered the material.<br><br>- To improve their speaking skills, I showed them 2 different pictures of classrooms. To carry out this task I implemented the *Think, Pair, Share* method.<br>First the students were given 'thinking time' to find differences between the two pictures. Then they had to work in pairs to discuss the results. The last step was to | | |

| | |
|---|---|
| | use the given time wisely to share their ideas with their partners. After a quick discussion the students shared their comparisons with the whole class. |
| **Տնայ ին աշխատնք** | *Worksheet* |
| **Անդրադար ձ դաին** | Overall, the lesson went well. The goal of the lesson was to consolidate the vocabulary and grammar we had studied. Thanks to different activities, my students were able to cover the material completely. They were able to compare two classrooms using *There is/ There are.* I think the lesson was a success because the students were able to apply the knowledge in practice. I managed to complete all the activities that I had planned for the lesson. |

Յավել ված 3, Դասապ ան 3

Դասապ ան

**Ուսուցիչ՝ Gohar Antinyan**

| *Առարկա՝ English* | | **Ամսաթիվ՝ 04.10.2022** | | **Կիսամյակ՝ I** | | **Դասարան՝ 3** | | **Դասաժամ՝ 4** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Խմբի կազմը՝** | Աղջիկ՝ 8 Տղա՝ 7 ՈՒՅԿ՝ | | | | | | | | |
| **Թեմա՝** | *My day* | | | | | | | | |
| **Օգտագործվող նյութեր՝** | *Projector, PowerPoint Presentation, Pictures*<br>*Online resources:* [www.baamboozle.com](http://www.baamboozle.com) | | | | | | | | |
| **Ամբողջական պատկեր՝** | *The students have already learned the new vocabulary and grammar. This lesson will help them to better remember and use the covered material.* | | | | | | | | |

| | |
|---|---|
| Դասի նպատակը՝ | • *To foster speaking skills*<br>• *To consolidate the vocabulary and the grammar pattern of the unit* |
| Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ | S2 To ask and answer simple questions using the simple present<br><br>S3 To speak and understand grade appropriate topics<br><br>S4 To participate in group discussions by asking and responding to questions by the teacher or group<br><br>S5 To talk about their daily routines<br><br>L1 To listen attentively to the speaker for specific information<br><br>GR 2 To use *present simple questions and answers*<br><br>ՕԼ3 –Գ-ՈՒ.1<br><br>ՕԼ3-Գ-Փ.3<br><br>ՕԼ3-Գ-Փ.4 |
| Կապը հանրակրթության պետական չափորոշչի հետ | *S 10*<br><br>*S 25* |
| Վերջնարդյունքները՝ | **Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ**<br><br>6. *Use the vocabulary in context, be able to produce a short oral speech*<br>7. *Use grammar pattern in oral speech (telling the time)*<br>8. *Apply level-appropriate sentence structures to be able to make dialogues* |

| | |
|---|---|
| **Խաչվող հասկացություններ** | Օրինաչափություն |
| **Բնագիտական և ճարտարագիտական պրակտիկաներ** | - |
| **Միջառարկայական կապեր** | |
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները** | **Նպատակներին հասնելու ռազմավարությունը** |
| **Ի՞նչ թիրախներ ընտրել Ձեր՝ որպես ուսուցչի առաջընթացը փաստելու համար:**<br><br>Develop speaking skills among ESL elementary learners | ***Սեղմ ներկայացնել, թե ինչ եք անելու այս դասին՝ այդ նպատակներին հասնելու համար:***<br><br>*First, I am going to pre-teach some new words, then the students are going to apply the words in oral speech. The students will read the story for several times, in order to master sentence structures before retelling the story.* |

| Գործողու թյ ուններ **(ժամ/տևողու թյ ուն)** | **Ու սու մնական գործու նեու թյ ու ն**<br><br>***Աշակերտներ*** | **Դ ասավորած տարբերակու մ և ՈւՆԳ ռազմավարու թյ ու ններ**<br><br>***Ու սու ցիչ*** | **Առանցքային հարցեր**<br><br>**Հիմնական ստու գու մներ**<br><br>**(հանձնարարու թյան վերջնարդյու նքը նպաստու մ է դասի նպատակին)**<br>**Կապը չափորոշիչային վերջնարդյու նքների հետ** |
|---|---|---|---|
| **10 min** | *To review the vocabulary* | *To show a PowerPoint presentation for them to review the vocabulary* | |
| **5 min** | *To tell the time* | *To show pictures of clocks* | *-What's the time?* |
| **10 min** | *To complete a worksheet* | *To hand out worksheets and monitor the class* | |

| | | | |
|---|---|---|---|
| **15 min** | *To make dialogues* | *To make pairs and provide the students with an opportunity to work together so that they can ask and answer the questions* | |
| **Աջակցություն** | | | |
| **Գնահատում** | *Formative assessment.*<br>*AFL strategies* | | |
| **Տնային աշխատանք** | *Worksheet* | | |
| **Անդրադարձ դասին** | I think the lesson was successful, since all the students were engaged in the lesson, and I managed to do what I had planned beforehand. It was especially important for me to check how well they were using the new vocabulary and grammar pattern in oral speech. They could easily make simple questions and answer them. However, I don't think that making dialogues is the best way for them to develop their speaking skills as elementary school students have limited vocabulary and in this case they don't use their whole potential. | | |

Հավելված 4, Նկար 1




Հավելված 5, Նկար 2



Հավելված 6, Սյունակաշար 1

**Բանավոր հաղորդակցության գնահատման սանդղակ**

| | 3 | 2 | 1 | 0 |
|---|---|---|---|---|
| **Սահունություն** | Խոսում է սահուն և առանց ընդհատումների | Խոսում է կարճ ընդհատումներով, որը չի խոչընդոտում իմաստի ընկալմանը | Խոսում է ընդհատումներով, որը հաճախ խոչընդոտում է իմաստի ընկալմանը | Խոսում է բազմաթիվ ընդհատումներով, որը մշտապես խոչընդոտում է իմաստի ընկալմանը |
| **Արտասանություն** | Արտասանությունը հստակ է | Արտասանությունը հիմնականում հստակ է, աննշան անճշտություններով | Արտասանության անճշտությունները հաճախ խոչընդոտում են իմաստի ընկալմանը | Արտասանության անճշտությունները մշտապես խոչընդոտում են իմաստի ընկալմանը |
| **Բառապաշար** | Օգտագործում է նախատեսված բառապաշարը | Օգտագործում է նախատեսված բառապաշարը՝ երբեմն կատարելով բառերի սխալ ընտրություն | Օգտագործում է սահմանափակ բառապաշար | Չի օգտագործում նախատեսված բառապաշարը |
| **Քերականություն** | Օգտագործում է համապատասխան քերականական կառույցները | Օգտագործում է համապատասխան քերականական կառույցները՝ կատարելով մեկից երկու սխալ | Քերականական կառույցներում առկա են երեքից հինգ սխալներ | Չի օգտագործում համապատասխան քերականական կառույցները |
| **Կապակցվածություն** | Նախադասությունները տրամաբանական են | Բոլոր նախադասությունները նույն թեմայի մասին են | Նախադասությունները նույն թեմայի մասին չեն | Միտքը պարզ չէ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կապակցված են | | | |